22. ՀԱՍԱՆ ԽԱՆԻ ԳԵՐԻՆ

Հասան խանը իրան ղոշունով էկե նստեր էր Սարդարաբադ, իրան մարդկանցը թորուն-թոբուն կղրգեր հայ գեղանը թալնելու։ Էրեվրնու մհալը, Շորագյալը, Աբարանը էլ տեղ չմնաց քուլլի թալնեցին—բիրադի՝ էլ մալ, էլ օչխար, էլ ապրանք չմնաց բիրադի թալանի գնաց։

Էսման, էդ ալան-թալանի օրերու՝ն էր, թալինցի Խաչո աղի չորբան Հասոն հ՚իրիկունը օչխարը կրերե գեղ ու ի՞նչ կտեսնի, Խաչո աղի տունը սուգ ու շիվան էր։ Հարց ու փորց կէնե, գիմանա որ Խաչո աղին Հասան խանի մարդիկ բռնե եսիր են տարե։ Հասոն Խաչո աղի կնկան կըսե.— Խանըմ ջան մի լա, եվ որ քու չորան Հասոն մեռավ, նոր սուդ էրա, քանի էս դլոխս ումուղներուս վրեն է, իմ աղին չեմ թողնի Հասան խանը եսիր տանի։

Հասոն հարսներուն կըսե.— Մի էրկու հաց բերեք ընձի ճանպու պաշար։

Հասոն հացերը կկապե կռնակն ու ճանպա դընգնի, Սարդարաբադ ուր էս որ էկա։ Սաբախտան թեղ աղոթրանը բացվելու պես կհասնի Սարդարաբադ, եվ որ արևը կծաղկի, կէրթա Հասան խանի չադրը կգտնի, գուղե որ նես էրթա, ֆառաշները չեն թողնի, էսոնց դալմաղալին Հասան խանը նեսեն ձեն կուտա, ֆառաշին նես կկանչե, դիմանա որ քուրդըմ գուղե հ՚իրան տեսնի, կըսե.— Թողեք թող գա։

Զորան Հասոն նես կմտնի, թամալահ կէնե, ձեռները դոշին կդնե կկայնի։ Հասան խանը կհարցու.— Հը, քուրդ, ի՞նչ խնդիրք ունիս։

Հասոն մե անդամմ էլ ձեռը դեդին կտանե, կդնե բերնին ու ճակտին ու կըսե.— Բաշընա գոնդուգյում փադի շահի վենձ խան, յա իմ խնդիրս կկատարես, յա թե չէ դլոխս կկտրես։ Ես թալինցի Խաչո աղի չորան Հասոն եմ. իմ աղին քու մարթիկը էրեկ բռնե եսիր են բերե, հիմի ես եկեր եմ քու ոտը հ՚ընդե, շատ մուննաթ կէնեմ օր ընձի էնոր տեղը վերցուս եսիր, էդ մարդուն ազատես էրթա իրան տունը։ Քու դլխուն մեռնիմ վենձ խան, Խաչո աղեն շատ հացով մարդ է, էնոր դուռը համաշա բաց է՝ էլ հայ, էլ թուրք, էլ քուրդ, էլ մլթոն խուլասա ի՞նչ միլլաթ ըսես օր էնոր տունը հաց չի ուտե, ղոնախ չի էղնի էնոր։ Անտեր էթում էրեխոնց տեր ու տիրական, քյասիր քյուսուբներուն ձեռ բռնողը Խաչո աղեն է, էդոր համար էլ ես չեմ ափսոսա, որ իմ կյանքս էնոր ուղուրին դնեմ։

Հասան խանին շատ դուր դուքա քրդի ըսածը, կանչել կուտա Խաչո աղին եսիրներու միչեն։ Խաչո աղեն թամալա կէնե կկայնի։

— Էս քրդին կճանչնա՞ս Խաչո աղա,— կհարցու Հասան խանը։

— Ինչրխ չէ, խանն ապրած կենա, իմ չորան Հասոն է։

— Էս ինչ լավ մարդ էս էղե Խաչո աղա, օր Հասոն իրան կյանքը քու ուղուրին է դրե, գուղե քեզի ազատեմ, իրան քու տեղը եսիր պահեմ։

— Ի՞նչ ըսեմ, վենձ խան, մեր օրենքը մեզի սորվըցուցեր է օր ամեն մարթու էլ մե աչքով աշենք, մեր դուշմնին բիլա գիշութեն չէնենք, ես էլ ինչրխ օր վենձերես լսե ու սովրեր եմ, էն էլ թամամ չեմ էրե, ըշտը մարթ եմ էլի, աշխատեր եմ խիղճս մտքես չհանեմ։

— Չէ՛, կէրեվա օր դու լավ մարթ ես էղե, Խաչո աղա, էդոր համար էլ քու չորան Հասոյի խնդիրքը պըտի կատարեմ, էրկուսիդ էլ բաց կթողեմ գնացեք ձեր գործերուն։

Հասան խանի քովեն Խաչո աղեն ու Հասոն օր դուս էկան, Հասոն ըսավ.— Խաչո աղա, տեսա՞ր քու չորան Հասոյին, բանի տեղ չէիր դնե, ես օր չէղնեի դու կազատվեի՞ր Հասան խանի եսրութենեն։

— Հա, օղորթ կըսես, Հասո շան, դու օր չէղնեիր Հասան խանը ընչի՞ կազատեր։

Խաչո աղեն ու Հասոն կշիտկին դեպի իրանց գեղ. վերստմ, էրկուս կէրթան, չեն էրթա, Հասոն էլի կվերու կըսե.— Հե՞ գիդի Հասո, ինչրխ պրծուցիր աղիդ, էման չէ՞ Խաչո աղա, Հասոն որ չէղնի՞ր...

— Հա Հասո շան, լավ պրծուցիր։

Էման շատ կէրթան, թե քիչ Հասոն թեղ-թեզ էլի կըսե.— Ղոչախ

Հասո, հալալ էղնի քու մոր ծծի կաթը, օր քեզի տվեր է հ՞ո՞ւմ բերնին է ընկե, օր սիրտ էներ ելներ Հասան խանի երեսը ու քու աղիդ ազատեր, յարաբ Խաչո աղա, դու իմ լավութենս ի՞նչրխ պիդի մըտհան էնես, էս լավութենիս տկեն ինչրխ պըտի դուս գաս։

Խաչո աղի հերսը չատ էր ելե, չունքի օր էս քուրդը, կըսես թե ուրիշ էլ խորաթա չկա, թեզ-թեզ երես կուտար թե. «Հա ես քեզի պրծուցի, հա ես քեզի պրծուցի»։ Հ՚իրգուն մթնշաղին կհասնին Թալինու կալերը, Խաչո աղեն կկայնի ու կըսե.— Հասո անգաչ էրա ինչ կըսեմ, կէրթաս մեր տուն, բիրադնցուն կբարևես ու կըսես, թե աղիս բերի ընչարի կալերը, ետ դարձավ գնաց։

— Ի՞նչրխ թե, ո՞ւր գնաց։

— Ըսա գնաց Սարդարաբադ Հասան խանի քովը։

— Ի՞նչ կըսես աղա, Հասոն անչաղ քեզի պրծուց բերեց, հիմի էլի զոռով կէրթաս ընգնիս գրգաբը,— չէ աղա, չէ չեմ թողնի էրթաս, թե՞ վրես տռըսխա կէնես։

— Չէ՛, Հասո, կէրթամ Հասան խանի քով, լավ է Հասան խանի եսիրն էղնիմ, քան թե չոբան Հասոյի ազատլամեն էղնիմ,— ու Խաչոն կդառնա դիբա Սարդարաբադ։ Սաղ գիշերը Խաչո աղեն ճանպա կկդրե, հ՚արևը դիպնելու պես կհասնի Հասան խանի չադրի դուռը, խղմաթքյարներուն կխնդրե խանին իմաց տան թե. «Խաչո աղեն ետ է դառե էկե, գուզե քեզի տեսնի»։

Հասան խանը օր կլսե Խաչո աղի ետ գալը կզարմանա, նես կկանչե ու կըսե.— Այ մարդ ուրիշ եսիրները աստված-աստված են, թե մե թավուրմ ազատվին, դու էլի ե՞տ ես էկե։

— Հա, Հասան խանն ապրած կենա, ետ եմ էկե,— ու կսկսե երգել.— Գեչմա մուխանաթին քորտուսունան.

Գոյ ափարսըն սել սանի
Գիրմա թուլքունան դալդասընա
Գոյ ասլան եսրն սանա։

Յանի թե.— Մի ընցնի նամարդ մարդու կարմնչով,
Թող սելափը տանի քեզի,
Մի մտնի աղվեսի տալդեն,
Թող ասլանը ուտե քեզի։

— Հա վենձ խան ջան, ես դարձա էկա, էկա՝ էլի լավ է քու եսիրն էղնիմ, քան թե քուրդ Հասոյի ազատլամեն։

Խանը տեղեն գելնի, Խաչո աղի ճակատը կպաքե.— Բարի քյալլա տղամարդ,—կըսե, իրան ապեն կքցե Խաչո աղի թևերուն, կըսե,— Գնա, աստված քեզի հետ, հիմի չոբան Հասոյի ազատլամեն չեմ՝ Հասան խանի ազատլամեն ես։